

եւ հազարաւորներ խմբովին Վաշինկըն գացին ծերակուտէն իրենց վիճակին դարման պահանջներն համար: Հազիս ասոնք ցրուեցան ամուսյաիին Հիբակոյի երկաթ-ուղիներուն վրայ եղող գործավարները զործադուլ ըրին, որովհետեւ իրենց օրական վարձքն աւելցընել եւ գործելու ժամերը պակսեցընել շուտակեցաւ: Հետգնետն անոնց հետ միացան բոլոր շոգեկառաց եւ ըովերու գործավարներն, անգործ եղող մարդիկ ունայն իսկզեղացիներն. եւ բոլոր շոգեկառաց երթեւեկութիւններն արգելեցին, մերենասները խորտակեցին, կառքերն այրեցին եւ դիմադրողները զարկին մեռուցին: Բէլվէնտ Միացեալ Նահանգաց զահերէցն յայտարարութիւն մը հանեց որով խողովարարները կը յորդորէր որ հանգրտին, ապա թէ ոչ պատերազմի վիճակի մէջ պիտի դնէ երկիրն ու զենքով զիրենք պիտի զսպէ. սակայն ապստամբներն ծաղր ըրին յայտարարութիւնն, որովհետեւ իրենք միլիոնի կն հասնէին եւ կառավարութեան զօրքը շատ քիչ էր: Վերջապէս ամուսյա 15ին Բէլվէնտ միջնորդ մտաւ գործավարաց եւ անոնց տէրերուն մէջ, եւ ասով երկիրը խաղաղացաւ ու շոգեկառացներն սկսան բանիլ: Այս 15 օրան խողովութեան մէջ 17 հոգի սպաննուեցան. բայց նիւթական վնասը 4 միլիոն տոլար կը համարուի:

Ուրիշ սեւ ամպ մի երեցաւ Ասիայի արեւելեան հիւսիսային կողմը: Բորէա թերակղզին առանձին թագաւորութիւն մըն է ծննաց թագաւորին վերին իշխանութեանը տակ: Բայց դրացի ժաբոնն ալ մեծամեծ շահեր եւ քաղմամբի զադ-թականներ ունի այս բարեբեր երկրին մէջ, ուր բարեկարգութիւն միայն կը պակսի: Վերջերս ասպատամբութիւն մ'ելլելով ժաբոնցիք զօրքով մէջ մտան զպեցեցին ու Սէուլ մայրաքաղաքը ըռնելով կը պահանջեն որ վարչութեան մէջ կարգաւորութիւն ըլլայ, որով անձանց եւ ստացուածոց ապահովութիւն գոյանայ, նաւահանգիստներն իրենց առջեւ քաց ըլլան, իրենց շնորհուի թերակղզւոյն մէջ երկաթուղիներ բանալ եւ հեռագրական գծեր հաստատել, իրենք կարենան երկրին ըովերը բանեցընել, եւ երկիրն մէջ արուեստագործական հաստատութիւններ

կանգնել, եւ ուրիշ շատ բաներ. եւ կը յայնեն որ երկրէն պիտի չելլեն մինչեւ որ այս պահանջմունքները չկատարուին: Մէկ խօսքով Բորէայի մէջ այն դերը կ'ուզեն կատարել, զոր Անգղիացիք Եգիպտոսի մէջ կը կատարեն: Ծննաց տէրութիւնը ժաբոնցոց այս պահանջմանց դէմ դարձաւ, եւ իւր վերին իշխանութիւնը բանեցընելով կը պահանջէ որ ժաբոնցիք Բորէայէն ելլեն երկիրն առաջին վիճակին մէջ թողլով, զոր ժաբոնցիք լսել չեն ուզեր. եւ ասոր համար երկու տէրութիւններն ալ պատերազմի կը պատրաստուին: Եթէ պատերազմի երկու տէրութեանց մէջ սահմանաւորուի՝ Եւրոպայի համար մեծ հետեւութիւն չունենար, բայց ծննացիք իրենց թիկունք առաջ են դրացի Ռուսները, որոնց միջամտութեան չեն հաճիր Անգղիացիք: Հիւսիսային Ամերիկա, Գերմանիա եւ Գաղղիա ալ անկողմորը շահեր ունենալով անտարբեր չեն կենար. եւ որպէս զի ընդհանուր ըախում չըլլայ՝ ասոնք կ'աշխատին խաղաղական եղանակաւ հակառակ կողմերը հաշտեցընել, որ մինչեւ հիմա կարելի չէ եղած, մասնաւոր թէ պատերազմ արդէն հրատարակուած կ'ըստի:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄԵՆԿԱՆ

ՄԱՏՆԵԱՐՎԱԿԱՆ — Փետթեր եւ հին Հայոց ազգային երգերը. 229: — Սեկունդոս իմաստասէր. 233: — Ջնոքայ Գալայ Նոր օրինակ մը. 239: ՊԱՏՄԱԿԱՆ — Հունգարահայոց մայրաքաղաքն (Երբ-լա հայաքաղաքն) ի զիր եւ ի պատկերը. 241:

ԳՐԱԿԱՆ — Հայերէն այբուբենիք ծայաւորաց ծագումը. 244: ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆ — Նհաստանի Հայոց եկեղեցականները (Գատկեալ). 246:

ԵՐԿՐԱՏՐԱՆԱԿԱՆ — Կոստանդնուպոլսոյ երկրաշարժի եւ Երկրաշարժի ընդհանրապէս. 250: Հանդիսական մրցանակաբաշխութիւն Վիեննական Միթիթարեանց Վարժարանին ի Կոստանդնուպոլսի. 253:

ՔԱՆԱՏԱՐՎԱԿԱՆ — Արիւծ ծնւացած իշուկը (Ըստ Նաֆոնդիսի). 256:

ԱՐԻՒՅԵՑԻՒՄԵՆԿԱՆ — Գրականութիւն. 257: ԳՐԱԿԱՆ ԵՍՈՒՄԵՆԿԱՆ. 259:

ՔԱՆԱՏԱՐՎԱԿԱՆ — Արիւծ ծնւացած իշուկը (Ըստ Նաֆոնդիսի). 256:

ԱՐԻՒՅԵՑԻՒՄԵՆԿԱՆ — Գրականութիւն. 257: ԳՐԱԿԱՆ ԵՍՈՒՄԵՆԿԱՆ. 259:

ՔԱՆԱՏԱՐՎԱԿԱՆ — Արիւծ ծնւացած իշուկը (Ըստ Նաֆոնդիսի). 256:

ԱՐԻՒՅԵՑԻՒՄԵՆԿԱՆ — Գրականութիւն. 257: ԳՐԱԿԱՆ ԵՍՈՒՄԵՆԿԱՆ. 259:

ՔԱՆԱՏԱՐՎԱԿԱՆ — Արիւծ ծնւացած իշուկը (Ըստ Նաֆոնդիսի). 256:

ԱՐԻՒՅԵՑԻՒՄԵՆԿԱՆ — Գրականութիւն. 257: ԳՐԱԿԱՆ ԵՍՈՒՄԵՆԿԱՆ. 259: